№ 96 Յունիսի 10 (22) 1880 Յունիսի 10 (22) № 96

ԻՆՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ

# ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 ռուբլի, կես տարվանը 6 ռուբլի։ Առանձին համարները 5 կոպեկով։

Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ։

Օտարաքաղաքացիք դիմում են ուղղակի Тифлисъ. Редакція „Мшакъ“

Խմբագրատունը բաց է առաւօտեան 10—2 ժամ (Բացի կիրակի և ազգ տօներից)

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով։

Յայտարարութիւնների համար վճարում են իւրաքանչիւր քառին 2 կոպեկ։

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Մահմեդական շարժում.—Ներքին տեսութիւն. Շերամապահութիւն. Նամակ Պեռօսկիից. Նամակ Խմբագրին. Ներքին լուրեր.—Միայիչ հեռագիրներ. — Յայտարարութիւններ. — Բանասիրական. Նամակ Գերմանիայից.

## ՄԱՀՄԵՏԱԿԱՆ ՇԱՐԺՈՒՄ

Լմին անգամ, երբ մահմեդական աշխարհին դիպից որ և է վտանգ է սպառնում, ամեն անգամ երբ Թիւրքիան նեղ դրութեան մէջ է գտնվում,—Թիւրք կառավարութիւնը աշխատում է արուեստական կերպով յայտնացնել մահմեդականների մէջ կրօնական մոլեռանդութիւնը։

Կրօնական մոլեռանդութեան շարժում նշանաւորելի եղաւ վերջին ռուս Թիւրքաց պատերազմից առաջ էլ, երբ Կ. Պոլսի մէջ գումարվեցաւ եւրոպական կոնֆէրէնցիա։

Այդն կրօնական մոլեռանդութիւնը երևան է գալիս Թիւրքիայի մահմեդականների շրջանում և այժմ, երբ խօսք կայ Հայաստանում վերանորոգութիւններ իրագործելու մասին։

Թիւրքաց կառավարութիւնը, որ առհասարակ համբերում է որ մահմեդականները ճնշեն, հարստահարեն, հալածեն քրիստոնեաներին, հէնց որ խօսք է լինում Թիւրքիան վերանորոգելու, իսկոյն փոխում է իր գործունէութեան եղանակը և սկսում է հաւատացնել աշխարհին, որ հարստահարողները, քրիստոնեներն են, իսկ հարստահարվածները խեղճ մահմեդականներն են...

Եւ ահա այժմ, երբ Ռ. Դուռը համոզվեց որ Եւրոպան յեռ չի կանգնի իր պահանջներից Օսմանեան պետութեան թէ եւրոպական և թէ ասիական նահանգներում վերանորոգութիւնները մտցնելու, մահմեդական աշխարհը սկսում է յուզվել, աղդակներ դցել, հաւատացնել որ Ռումելիայի մէջ քրիստոնեաներն են հարստահարում անմեղ մահմեդականներին, որ Հայաստանում էլ մահմեդական տարրը տանջվում է հայերի ձեռքից և այլն։ Կ. Պոլսի Թիւրք լրագիրները կատաղի կերպով խօսում են Անգլիայի և ամբողջ Եւրոպայի դէմ, հաւատացնում են որ Հայաստան առնելով երկիրն էլ չը կայ երկրագնտիս վրա, որ այն, ինչ որ առնում են Արմենիա, դա Քրիստոնեան է, հաւատացնում են որ Քրիստոսն էլ չեղ չէ, այլ քաղաքակիրթ, լուսաւորված ազգութիւն է, և այլն....

Այդ ամբոխ ծաղրական և ողորմելի դատողութիւնները վերջին ծիծն է, որ թափում է մահմեդական աշխարհը իր դարեւոր անշարժութիւնը անդորը պահպանելու համար։

Լոյսը և շարժումը այն այժերն են, որոնցից ամենից շատ է վախենում մահմեդական աշխարհը։

Եթէ մահմեդականները իրանց ցոյց են տալիս լուսաւորված, թէև ասիական կրթութեան պատկանող մի ցեղ, ինչի են վախենում այն բարեկարգութիւններից, որոնց մտցնելը պահանջում է Եւրոպան....

Թիւրքաց կառավարութեանը, ի հարկէ, օգուտ չէ, որ նրա հպատակները լուսաւորվեն, սկսեն ապրել բարեկարգ, մարդավայել կեանքով, բայց Հայաստանի մահմեդականները վերջապէս պէտք է հասկանան որ իրանց ապագայ բարօրութեամբ հայերին պարտական կը լինեն....

Թիւրքիահպատակ քրիստոնեայ ազգերից հայն է որ ամենից շատ է տանջվել և նոյն իսկ հային են պարտական Փոքր-Ասիայի միւս ազգերը, թէ քրիստոնեաները և թէ մահմեդականները, որ ստանալու են վերջապէս մարդավայել իրաւունքներ։

Սան-Ստեֆանոյի դաշնագրի 16-րդ յօդուածը և Բերլինի դաշնագրի 61-րդ յօդուածը թէև հայերին են վերաբերվում, բայց նոր կեանք պէտք է տան ամբողջ Փոքր-Ասիային։

Գ. Ա.

## ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՇԵՐԱՄԱՊԱՀՈՒԹԵԱՆ ՎՐԱ

—

Բ.

Կոկոնը քաղելու ժամանակ ապականված ու վնասվածները (ջրա) առանձին են հաւաքում մեծամասին էլ վրայի աւելորդ ոստայնները, կամ այսպէս անուանվաղ ծուրը խոնարհելով ջոկում են հասա, թաղիքի պէս հիւսուածք ունեցողները (բարաղ)։ Հաւաքած կոկոնը՝ առանց չորացնելու՝ ծախում են տեղացի մեսաքա քաշել տուողներին, որոնց առաջարկութիւնը սիրով պիտի ընդունէք, կը փորձեմ ներկայիս դրաէր կարդալ ձեզ, խնդրելով որ ձեր կողմանէ ես ամեն ջանք և փոյթ չը խնայէք մեր Նորաբոդրոյ ընկերութեան ծաւալմանը, դրաէր կարդալով ամենուրեք և ամեն անոնց՝ որոնց ուսումնասիրութիւնն ու ազգասիրութիւնը ձեզ ծանօթ են, ինչպէս են ձերն առ մեզ։

Գալով ընկերակցութեան պայմաններուն, ձեզ կուղարկենք ներկայիս նա ևս ընկերութեան կանոնագիրը, յորմէ կրնաք տեղեկանալ, իսկ եթէ աւելի օրինակներու պէտք տեսնէք, հաճեցէք մեզ գրել, քանի օրինակ ուզէք անմիջապէս կրնանաք։ Պիտի տեսնէք թէ կանոնագրիրն զեւ տպալ չէ, վասն զի վերջնական կերպով տպելէ առաջ, կը փոփոխէինք փորձառութեամբ տեսնել թէ ինչ են այն կէտերը որ փոփոխութեան պէտք ունին, այս խնդիրը այժմ դիւանի և մասնաժողովոյ մը քննութեան յանձնուած է, և ուրախութեամբ կընդունինք ամեն այն դիտողութիւնները որ մեզ ծանուցանել պիտի բարեհաճիք, այս առթիւ սա ևս կը խնդրենք, որ եթէ ձեր կողմերը մեր ընկերութեան համանպատակ կամ նմանօրինակ ընկերութիւններ կան, անոնց կանոնագրութիւններն մէկ մէկ օրինակ վաղ ընդ փոյթ մեզ խրկելու ջնորն ընէք։

Խնդրելով որ բարեհաճիք ընդունել մեր անկեղծ ողջոյնից ջերմ հաւասարը, մնամք ի դիմաց Դիւանի Առնոլդոս Յ. Թիւրլուբեան, ատենադպիր Ս. Ռաֆայելեանց։

Ի դիմաց այսպիսի սիրաբոյր նամակի, անկարելի էր անուանբերութեամբ ձեռքերը խաչել, հարկաւոր էր գործել։ Կանոնագրութիւնը, բաղկացած 37 յօդուածներից, ներկայացնում էր բաղմաթիւ թերութիւններ. բարեբաղդաբար նա միայն մի առաջարկութիւնը սիրով պիտի ընդունէր, կը փորձեմ ներկայիս դրաէր կարդալ ձեզ, խնդրելով որ ձեր կողմանէ ես ամեն ջանք և փոյթ չը խնայէք մեր Նորաբոդրոյ ընկերութեան ծաւալմանը, դրաէր կարդալով ամենուրեք և ամեն անոնց՝ որոնց ուսումնասիրութիւնն ու ազգասիրութիւնը ձեզ ծանօթ են, ինչպէս են ձերն առ մեզ։

Գալով ընկերակցութեան պայմաններուն, ձեզ կուղարկենք ներկայիս նա ևս ընկերութեան կանոնագիրը, յորմէ կրնաք տեղեկանալ, իսկ եթէ աւելի օրինակներու պէտք տեսնէք, հաճեցէք մեզ գրել, քանի օրինակ ուզէք անմիջապէս կրնանաք։ Պիտի տեսնէք թէ կանոնագրիրն զեւ տպալ չէ, վասն զի վերջնական կերպով տպելէ առաջ, կը փոփոխէինք փորձառութեամբ տեսնել թէ ինչ են այն կէտերը որ փոփոխութեան պէտք ունին, այս խնդիրը այժմ դիւանի և մասնաժողովոյ մը քննութեան յանձնուած է, և ուրախութեամբ կընդունինք ամեն այն դիտողութիւնները որ մեզ ծանուցանել պիտի բարեհաճիք, այս առթիւ սա ևս կը խնդրենք, որ եթէ ձեր կողմերը մեր ընկերութեան համանպատակ կամ նմանօրինակ ընկերութիւններ կան, անոնց կանոնագրութիւններն մէկ մէկ օրինակ վաղ ընդ փոյթ մեզ խրկելու ջնորն ընէք։

Խնդրելով որ բարեհաճիք ընդունել մեր անկեղծ ողջոյնից ջերմ հաւասարը, մնամք ի դիմաց Դիւանի Առնոլդոս Յ. Թիւրլուբեան, ատենադպիր Ս. Ռաֆայելեանց։

Ի դիմաց այսպիսի սիրաբոյր նամակի, անկարելի էր անուանբերութեամբ ձեռքերը խաչել, հարկաւոր էր գործել։ Կանոնագրութիւնը, բաղկացած 37 յօդուածներից, ներկայացնում էր բաղմաթիւ թերութիւններ. բարեբաղդաբար նա միայն մի առաջարկութիւնը էր, որը դեռ պիտի քննվեր, որի համար առանձին մասնաժողով կազմված էր և ընկերութեան անդամների քուէին պիտի հնարարկվեր։

Մարտ ամսի վերջերում դրաէր ստացած լինելով փարիզից կանոնագրութեան քննողական նիստերին ներկայ գտնվելու և վիճաբանութիւններին մասնակցելու, իմ այնտեղ գնալը քանի մի օրով աճապարելի և մի շարաթից յետ ունեցանք նիստ, որը քննողութեան երկրորդ նիստն էր արդէն։

Բայց նախ քան այդ նիստերի և կանոնագրութեան հարցի վրա խօսելը, աւելորդ չենք համարում մեր ընթերցողներին ծանօթացնել ընկերութիւն հիմնելու աջողակ միջոց ունեցած այն պատուական երիտասարդի հետ, որը իր հարենասէր հոգով և ոգեշունչ ձգտումներով հանգերձ, իր բնական ճարտար լեզուն և դիւրաթեր գրիչը ամիսներով այդ գաղափարին ծառայեցնելով քաջախրտ հանձնառութիւնը ունեցած է։ Այդ երիտասարդն է պ. Սիմէոն Ռաֆայելեան, սոյն բօսկիս ընկերութեան ատենադպիր, հասակը արդէն առած, ուսանող բժշկութեան փարիզում։ Մեկը նոցանից, որոնց համար խօսքը կէս զարմ է, իսկ զարմը տաք խօսք։ Համեստ բնատրութեամբ, եռանդուն գործի մէջ, ճարտար և տաղանդաւոր, մի և նոյն ժամանակ լիքը նոր գաղափարներով ազգային հարցերի վերաբերեալ, պատուած իր բոլոր ընկերներից և բարեկամներից, նա ընկերութեան սիրեն է և ամենառաջին գործողը։ Իր հրատարակեալ նամակներով դէպի եւրոպական ուսանողութեան բարոր ներկայացուցիչները, նա արդէն կարողացել է բաղմաթիւ բարեկամներ գտնել ընկերութեան համար։

Ամենառաջին միտքը, որը կարող էր ծնել այդ պիտի մի ընկերութեան հիմնողի մէջ, կը լիներ նախ, անկասկած, այն, որ օտար և անազգին քաղաքում, որպէս փարիզ, առանց մի ընկերութեան անկարելի է ստեղծել, պահպանել և իմանալ այն կապը, որը պիտի լինի ազգային քաղաքում կը անվանվ բարձրագոյն ուսանողների մէջ։ Ես ճշմարիտ, ես զարացած էի, 1878 թուին իմ այնտեղ եղած ժամանակ, երբ համոզուեցի, թէ Ֆրանսահայ ուսանողներին ոչ մի բարոյական կապ իրար չէ կապում, հազիւ թէ իրանք ճանաչէին, հազիւ թէ, տարիներով այնտեղ ապրած և ուսած, իրար երկու երեք անգամ խոսակցած լինէին։ Մի խօսքով, փարիզում կային հայ ուսանողներ, բայց չը կար հայ ուսանողութիւն։ Այս նոր ընկերութիւնը կը տայ միջոց այնտեղ եղած հայերին պարբերապէս ժողովվել միասին, փոքր հնա խօսել ազգային և կամ այլ զորձերի վրա, իրար մի զգալ, մի օգով նչել, մի հոգով վառուել։

Բայց թէ ինչ ազգային օգուտներ կարելի է սպասել այդպիսի մի ընկերութիւնից, այդ կը տեսնէ ընթերցողը վերջերում։

Գանք մեր նիստերին։

Առաջի նիստին, որին ես մասնակից էի, ներկայ էին մօտ քսան ու հինգ անձինք, մեծամասնութեամբ ուսանողներ, երեք չորս վաճառականներ և երկու հայ ոսկերիչ արհեստաւորներ։ Ընկերութիւնը իր սեսէական և մտնջնեաւոր ժողովատեղի չունէ դեռ, այնպէս որ ժողովը մի վարձու դասնիցի մէջ պիտի կայանար rue d'Aarras փողոցի վրա, վճարելով ամեն անգամին ութ ֆրանկ։ Ընկերութեան դիւանը բաղկացած է ինը անձերից, որոնցից յիշենք այստեղ միայն նախագահ՝ պ. Թիւրլուբեան, ատենադպիր պ. Ռաֆայելեան և գանձապետ պ. Ներպերիեան։ Վիճաբանութիւնները լի-

թիւը բաւական շատ է լինում: Մեչ վերաբերում է մեռաքս քաշելու գործարաններին՝ դրանցից ևս բաւական թիւով կան վիճակումն. չը յիշելով հին ձևի բաւական գործիքները՝ կան և երկու նոր ձևի գործարաններ, որոնցից առաջինը, որ Գրուբեռի քարաքարումն է և պատկանում է պ. Բարեյանցին՝ իր կատարելութեամբ կարող է մրցել մինչև անգամ Եւրոպայի այդ ձևի գործարանների հետ: Երկրորդն է Ներքին-Ազուլիսում Նուսուսեան եղբարց գործարանը, որ շինած է 1863 թուականից: Հաւաքած ծուրից գիւղացուհիները հասարակ թել են մանում դուկով (վիկի): Լօքաները նոյնպէս պահում են անական գործածութեան համար. Նրան եփում և կաց են շինում, որից նոյնպէս գուլով շատ գեղեցիկ թել (քէջի) են մանում տնական ամենայն տեսակ գործածութեանց համար:

Ահա և շերամի արտադրութիւնների գները Մեզանում: Շերամի սերմը ծախվում է Թարասանի տեսակը 20-30 կոպէկ զօլոտնիկը, եապօնականը-15—20 կոպ., և իտալականը 30—45 կոպ.: Թարմ կոկոնի իտալական տեսակը ծախվում է 18—25 բուրլի պուդը, Թարասանի տեսակը-15—20 բուբ., Եապոնիայի կանաչ տեսակը-12—16 բուբ. և սրա սպիտակ տեսակը-8-15 բուբ.: Լաստ (ֆիրիզոն) մի պուդը արժէ 40-50 բուբ., իսկ տեղական գործարաններում քաշած մեռաքսը (ֆիլատուր) Մոսկվայում ծախվում է պուդը 400—600 բուբլ:

Լաւ բերքի ժամանակ 2 զօլոտնիկ շերամի սերմից կարելի է քաշել մի պուդ թարմ կոկոն, բայց սովորաբար 3—5 զօլոտնիկից ըստացվում է մի պուդ, $2^1/_2$—3 պուդ թարմ կոկոնից զոյանում է մի պուդ չորացրած կոկոն և 3—8 պուդ չոր կոկոնից ստացվում է մի պուդ մեռաքս:

Վերոյ գրեալներից պարզ յայտնվում է թէ որքան արդիւնաւէտ է մեր երկրի համար շերամապահութիւնը: Բայց թէ ինչ ասոնձանի ընդունակ է մեր ժողովրդը գիւղատնտեսութեան այդ կարևոր ճիւղի արդիւնագործելու. մէջ՝ ապացոյց կարող է լինել այն հանգամանքը, որ շերամապահութիւնից այժմ չեն ստանում այն օգուտը, ինչ ստանում էին մի 20 տարի առաջ: Քանի որ առաջ 2 զօլոտնիկ սերմից ստացվում էր մի պուդ կոկոն, և աւելի ևս, այժմ խիստ գոհ են լինում, եթէ այդ մի պուդ կոկոնը ստանում են 4—5 զօլոտնիկից: Կարելի է ինձ ասեն, որ սրա պատճառը շերամի հիւանդութիւնն է:—Այո, այդ բոլորովին այդպէս է և ես համաձայն եմ դրան: Բայց մի՞թէ չէ կարելի այդ հիւանդութեան առաջն առնել, մի՞թէ չլինելով չէ կարելի պաշտպանվել նրանից: Պէտք է գիտենալ՝ որ այդ հիւանդութիւնը,—որ այսպէս սարսափի մէջ է ձգել մեզ և շերամապահութեան բոլորովին անկում է սպառնում մեզ համար,—այդ հիւանդութիւնը ամենից առաջ Եւրոպայի շերամապահական երկրներումն է յայտնվել, սակայն այնտեղ պարա ու պաշտպանութեամբ կարողացել են շուտով նրա առաջն առնել և շերամապահութիւնը նորէն առաջվայ ծաղկեալ վիճակին հասցնել, իսկ մեր մէջ այդ պարաք ու պաշտպանութիւնը թողած՝ սնոտիապաշտական գործողութիւններով են կամենում վերականգնել շերամապահութիւնը:

Հաւատացէք, իմ սիրելի հայրենակիցներ, որ մատաղներ անելով, մոմեր վառելով, անթառամ ծաղկով շերամի վրա օրհնած ջուր սրսկելով և այլ հազարումի նախապաշարմունքներով վտանգին օգնել չի կարելի, հաւատացէք, որ եթէ իսկապէս կամենում էք շերամապահութիւնը մեր մէջ նորէն ծաղկած տեսնել, պէտք է փոքր ինչ աւելի լրջօրէն վարվել, պէտք է հասկանալ վերջապէս՝ որ հիւանդութիւնները պատճառվում են վատ սնունդից, շերամատան անմաքրութիւնից և առողջսերմերը չը պահելուց և ոչ թէ, ինչպէս կարծում են մեզանում, երկնքից են դրկվում իրրև մեր մեղաց պատիժ:

Ներամապահութեան մեր ներկայ եղանակի բոլոր թերութիւնների մի առ մի թելը իմ կարողութիւնից բոլորովին դուրս է, սակայն ես կաշխատեմ ցոյց տալ աչքի ընկնող մի քանի գլխաւոր հանգամանքները:

ա) Ամենից առաջ պէտք է գիտենալ, որ այս գործի մէջ մեր գլխաւոր սխալն այն է, որ շերամի խնամատարութեան բոլոր գործը ձգված է միմիայն կանանց վրա (այդ իրներից տերև տուն բերելը անհիշպէս շերամի խնամատարութեան չէ կարելի վերաբերել) որոնք շատ անգամ իրանց նախապաշարմունքներով առաւել վնասում, քան թէ օգնում են գործին: Շերամի կեանքը ուսումնասիրելու, նրա դանազան պերիոդների հանգամանքներին ծանօթանալու և նրա վրա ազդեցութիւն գործող առիթները հետախուզելու համար, մեր կանայք գլխաւորապէս ընդունակ չեն,—այս տգամարդկանց պարտաւորութիւնն է, որոց ցուցմունքների համաձայն կանայք միայն կարող են առաջ տանել գործը:

բ) Ներամը սնուցանելու համար ընտրած բնակարանները շատ անգամ բոլորովին անպարմար են լինում: Նոքա իրանց այլ և այլ պակասութիւնների պատճառաւ բնակարան են լինում ամենայն տեսակ վնասակար կենդանիների, սոզուների և գեռունների, երբեմն էլ կից բնակարաններից նոցա մէջ ծուխ է թափանցում: Նոքա չեն ունենում կանոնաւոր լուսամուտներ, եղամներն էլ ծածկում են հնոտիներով, որոնց համար բաւական է մի թեթև քամի, որ տեղահան անելով ճանապարհ բանայ իր համար նոյնպէս և թռչունների և մեղուների համար:

Ներամատուն ընտրելու համար պէտք է աչքի առաջ ունենալ վերոյիշեալ բոլոր հանգամանքները և մանաւանդ ուշադրութեան պէտք է առած օդի մաքրութիւնը, որի համար պէտք է լինեն ամենայն յարմարութիւններ: Ներամատան մէջ օգտակար է վառարան ունենալ, որը կարելի լինէր կարևոր ժամանակում վառել թէ բնակարանի ջերմութիւնը պահպանելու և թէ օդը մաքրելու նպատակաւ: Լաւ է եթէ շերամատան դիրքը մի փոքր բարձր լինի և մի և նոյն ժամանակ դարձած դէպի արևելք կամ արևմուտք: Ներամների գետնդնքուն դալով աւելի յարմար է շերամատան մէջ շինած սեղանների կամ պօլկերի վրա սնուցանել քան թէ ուղղակի գետնի վրա, որով դժուար է լինում պարտաւորված մաքրութիւն պահելը: Եթէ ոչ մինչև վերջ գոնէ առաջին հասակներում անպատճառ հարկաւոր է շերամը այդպիսի սեղանների վրա պահել. այդ հանգամանքում մրջիւններից էլ կարելի է ազատ պահել սեղանների ոտքերի տակ ջրով լիք ամաններ դնելով:

գ) Սերմը, տաքացնելու ժամանակ, աւելորդ է շրջերի տակ ծածկել, հարկաւոր է ափեներով կամ թղթերով սեղանների վրա դնել այնպիսի տեղերում, ուր ուղղակի արեգակի ճառագայթներ չեն ընկնում և սենեակի մէջ հարկաւոր ջերմութիւնը պահպանել, այն է 16°—20° ըստ Ռ.: Ջերմութիւնը 24°-ից բարձրացնել երբէք հարկաւոր չէ:

դ) Մեզանում բոլորովին ուշադրութիւն չեն դարձնում շերամատան ջերմութեան վրա, սակայն այդ բանը կարևոր է: Ջերմութիւն պահպանելու ընդհանուր կանոնը հետևեալն է. 1-ն հասակի համար հարկաւոր է 20° ըստ Ռ., 2-րդ հասակի համար 18°, 3-րդ և 4-րդ հասակների համար 17—18°, 5-րդ հասակի համար 18°-ից պակաս չը պէտք է լինի. այս աստիճանից չը պէտք է ցածրացնել և 4-րդ քնի ժամանակ, թէև միւս հասակներում օգտակար էլ է գիշերները մի երկու աստիճան պակասացնել:

ե) Ներամների տակը տերևի վերաբերութեամբ մեր գիւղացիների գիտութիւնը այնքանն է միայն, որ որդների փոքր հասակում տալիս են նորահաս տերևներ, իսկ մեծանալուց—այլ ևս առանց ընտրութեան, կամ շատ շատ ջոկում են բոլորովին փչացրած տերևները: Բայց շերամին տուած տերևը մեծ ազդեցութիւն ունի նրա կեանքի վրա: Այդ կողմանէ ուշադրութեան պէտք է առնել, որպէս զի ցերեկվայ 10 ժամից մինչ 4 ժամը տերև չը պակնն, որովհետև վաղ հաւաքած տերևները աւելի հիւթալից են լինում և զով տեղում կարող են թարմ մնալ համարեա ամբողջ օրը, որպէս զի բնեռով, փոքրիկ սուսկերով ծածկած և առհասարակ վնասված տերևները որդներին չը տրվին, որովհետև դրանից սոքա հիշտութեամբ կը սկսրանան, որպէս զի տերևները վատ հոտ չը ստանային, որովհետև այնպիսիները սիրով չեն ուտում և որպէս զի որդներին չը կերակրվին լղարիկ տերևներով, որոնք՝ շշաքեւլուց չոր և անհարթ են թուում, որովհետև այդպիսի տերևներից որդները աւելի են վնասվում, քան թառամած տերևներից:

8երև տալու մեր կարգապահութիւնը ևս սխալ է. տերև տալ պէտք է աւելի շատ անգամ, միայն ի հարկէ փոքր փոքր քանակութեամբ և հետևելով որդների սխորժակին Առաջին հասակի որդներին տերև պէտք է տալ օր և գիշերի մէջ 4—6 անգամ, առաջին անգամը առաւօտեան 5 ժամին, վերջինը գիշերվայ 11—12 ժամին: Որքան կարճ լինի

---

նում են բուն պարլամենտական ձևով, ինչ կը վերաբերէ վիճաբանութիւնին, պիտի խոստովանել, որ ընկերութեան մէջ պակաս չէին այդպիսիները, իսկ այս վերջինների մէջ կային նաև գործ հասկացողներ. Ասելորդ է ասելը, որ ինչպէս ամենուրեք, նմանապէս և այստեղ կային մարդիկ, որոնք աւելի աղաղակող քան խօսողներ էին, միայն թէ իր ընդհանրութեամբ ժողովի կարգ ու կանոնը, որպէս և վիճաբանութիւնների դրական արդիւնքները գոհացուցիչ էին: Ցորս, բայց իսկապէս՝ երեք նիստերում քննութեան ենթարկուեցան կանոնագրի մոտ ութսուն յօդուածներ, որոնցից ամենագլխաւորները ի հարկէ մեզ ժամերով զբաղեցրին. Ասելցենք, որ իւրաքանչիւր նիստը տեւում էր մոտ չորսհինգ ժամ, կէս ժամ ընդհատումով:

Այս կանոնագիրը, որը Ֆրանսիայի ներքին գործոց մինիստրի ներկայացրած նիւթ, և որից սպասում ենք վաւերացումը մոտ օրերով, խմբագրած է հետեւեալ կերպով.

Ա. Նպատակ

Յօդուած. 1) Հայկազեան ուսումնասիրաց ընկերութիւնը, որոյն նպատակն անփոփոխելի է, 2-րդ, 3-րդ և 4-րդ յօդուածոց տրամադրութեանց համապատասխանող աղքատ հայ պատանեաց՝ ընկերութեան ծախիքը Եւրոպոյ մէջ յարձակոյն ուսմունքներ *) սովրեցնել տալու կը ծառայէ, որպէս զի գիտութիւնք ծաւալեն ի հայրենիս:

2) Առաջին յօդուածի տրամադրութիւնը վայելել փափագող պատանիք պարտին, յազգային ուսումնական խորհրդոց ընտրեալ քննիչաց ներկայութեամբ քննութիւն անցնելով, վկայագիր մ'ընտանալ հետեւեալ ուսմանց համար. ա) հայերէն լեզուի կատարեալ գնտութիւն, բ) ազգային և ընդհանուր պատմութիւն, գ) ֆրանսերէն կամ անգլերէն և կամ գերմաներէն, դ) ընդհանուր աշխարհագրութիւն ընդարձակ, ե) թուաբանութիւն, զ) ալգեբրա, է) երկրաչափութիւն, ը) գծագրութիւն, թ) սկզբունք բնական գիտութեանց և քիմիաբանութեան:

Պարտին միանգամայն վաւերական ծննդագիր մ' ու պատուատի վկայագիր մ'ունենալ:

3) Ընկերութեան որդեգիրք պարտաւորեալ են ընկեր գրվելու:

4) Ընկերութեան որդեգիրք պարտաւորեալ են Հաւատան երեսկ իրենց ուսումն ստարտելէն վերջ՝ ազգային վարժարանաց միոյն մէջ երեք տարի անընդհատ չափաւոր թոշակով դասախօսութիւն ընելու պայմանաւ. Այս մասին հարկ և արժան եղած երաշխաւորութիւնը պէտք է առնէ ազգային ուսումնական խորհուրդը:

Բ. Կենտրօնատեղի

5) Ընկերութեան կենտրօնատեղին է Փարիզ, փողոց...., որը կենտրոնական ժողովը իրաւունք ունէ ուրիշ փողոց մը փոխարինելու:

6) Ընկերութեան կենտրօնատեղին փոխադրելի է նաև եւրոպական մի այլ քաղաք, եթէ կենտրոնական ժողովը՝ ներկայացուցչ կամ միւնդրու մասնախմբոց հետ խորհրդակցութեամբ արժան դատէ, և կամ կենտրոնական ժողովոյ անբաւականութիւնը հաստատուն հիմնական փաստերով և ազգային ուսումնական ժողովոյ վճռովը, ապա թէ ոչ միտ ի փարիզ կը մնայ:

Դ. Պայման ընկերակցութեան

7) Ընկեր կընտրուի ամէն պատուաւոր անձ առանց խտրութեան սեռի, կրօնի և ազգութեան, եթէ ա) ուղղակի կամ միջնորդութեամբ իւր փափագն յայտնէ, որոյ վրա կենտրոնական ժողովոյ դիւանը և իր գաւառի կամ մասապարի ներկայացուցիչներն կամ ճիւղին մասնախումբը իւր որոշումը կը տայ (տես յօդ. 61 և 65), բ) գրաւոր կերպով հաւանութիւն տայ կանոնագրին և կենտրոնական ժողովոյ իրաւասութիւնը ճանչնայ. այս գրութեան մէջ պէտք է նշանակուած լինին իւր անունը, մականունը, տարիքը, ծննդատեղին, քուականը, վիճակն ու գրուած բաժինները.

8) Իւրաքանչիւր ընկեր ի սկզբան ընկերակցութեան պարտի վճարել ա) հինգ ֆրանկ իբրև մուտք մի անգամ վճարելի, բ) մէկ ու կէս ֆրանկ կանոնագրի և արձանագրութեան համար և գ) ամսական մի բանաչ համար մի ֆրանկ. Սակայն մուտքը, և արձանագրութեանց ծախքը միմիայն անգամ մը վճարելի գալով, ընկեր մը կրնայ ըստ հաճոյից մէկ բաժնէ աւելի ալ ունենալ:

9) Իւրաքանչիւր ընկեր՝ կենտրոնական ժողովոյ դիւանի առնտապետէն, առնտաղարէն և ներկայացուցիչներէն կամ ճիւղի առնտապետէն ստորագրեալ և ընկերութեան կնիքովը վաւերացեալ անդորրագիր մը կը ստանայ, որոյ վրա կարձանագրուին նաև իւր բաժինները.

10) Ընկերք բարոյապէս պարտք և պատասխանատուութիւն կը ստանձնեն ընկերութեան յառաջդիմութեան և զարգացմանը ամէն կերպով ազատութիւն:

11) Ցան տարի անընդհատ ընկերակցողք 400 ֆրանկ վճարելով և աւելի նուազ ժամանակաւոր ընկերք 500 ֆր. վճարելով կրնան մասնակցանալ ընկերք դառնալ, յորմէ յետոյ այլ ևս պարտաւորեալ վճարել կազատուին:

12) Բանաւոր պատճառով բաժինը վճարելու անկարող ընկերք մը պարտի կենտրոնական ժողովոյ դիւանին կամ իւր գաւառի ներկայացուցչին գրաւոր կերպով ծանուցանել պայմանաժամ մը յայտնելով, որ մէկ տարիէ աւելի չը պիտի անցէ յորմէ յետոյ եթէ չը վճարէ, հրամարեալ կը համարուի. իսկ ընկերք մը՝ որ անպայման վեց ամիս յաջորդաբար չը վճարէ երկիցս գրաւոր ազդարարութիւն կընդունի երկու ամսուան մէջ, և եթէ չը վճարէ, հրամարեալ կը սեպվի.

13) Ընկերք իրաւունք ունեն իրենց բաժինները մի կամ աւելի տարիներու համար կանխաւ վճարելու.

Դ. Օժանդակ, մշակնենաւոր և պատուոյ անդամք ու բարերարք

14) Ութերորդ յօդուածի տրամադրութիւնը գործադրող օտարազգիք օժանդակ ընկերք կանուանուին, իրաւունք ունեն կենտրոնական ժողովոյ ներկայ գտանուելու, իսկ հայերէն չը գիտնալուն համար վիճաբանութեանց և քուէին չեն մասնակցիր:

15) Ի սկզբան ընկերակցութեան առ նուազն 500 ֆրանկ վճարողք մշակնենաւոր ընկեր կը նշանակուին, և այնուհետև պարտաւորեալ տարէք ազատ են.

16) Կենտրոնական ժողովոյ հաւանութեամբ պատուոյ անդամ կարձանագրուին այն հայազգի կամ օտարազգի անձինք, որոնցմէ ընկերութիւնը կարեւոր ծառայութիւն մը և կամ 1000 ֆրանկ ստացած է.

17) Այն անձինք՝ որոնք արտաքոյ կարգոյ նուէր մը և կամ կտակ մը կընծայեն ընկերութեան, ընկերութեան բարերար կանուանին:

18) Բարերար կը լինուին նաև այն անձինք, որք ընկերութեան մի որդեգրին պաշտպան կանգնելով նորա կեանքը կապահովին մինչ վախճան իր ուսանողութեան շրջանին. Ապահովութեան եղանակը կենտրոնաժողովոյ հաւանութեանը վերապահեալ է.

---

*) Երկրագործութիւն, ճարտարագործութիւն, հանքարանութիւն, մեքենագործութիւն, վաճառականութիւն, ուսուցչութիւն և այլն.

երեկոյեան և առաւօտեան տերև տալու ժամանակավիճակը, այնքան աւելի լաւ է։ 2-րդ հասակից սկսեալ մինչև որդերի վախճանը օր և գիշերում 6 անգամից պակաս չը պէտք է տերև տալ, բացի քնի օրերից։

դ) Իմ կարծիքով բոլորովին անյարմար և մինչև անգամ վնասակար է մեզանում գործածած ցանքը (փշոտ թեւվը), որի փուչերից որդերը հիշատակեմ կարող են վնասուել և գրկիլ կոկոն շինելու կարողութիւնից։

## ՆԱՄԱԿ ՊԵՏՐՈՎՍԿԻՑ

Ապրիլի 25-ին։

«Մշակ» խմբագրիչ խնդրելը խանարհաբար ստանալով զայդ դրամ չուտով հասցնել սովեալ ազգայնոյն վանեցոց և նեղութիւն քաշել պարուսնակել ձեր լրագրի թերթի մէջ մեր Պետրովսկու սառրագրդիներու անուններն. այս գրով ուզարկում ենք երկու հարիւր երեսուն ռուբլ և ցուցակն սառրագրութեան, մնում մեր ինքիրամ բարեացդ ցանկացող. Ավէտ Ցուրփայեանց 25 ռ., Արտէմ Վարգանով 1 ռ., Յովսէփ Աբբենանց 2 ռ., Եղբայրք Շարաբեանցներ 25 ռ., Բեգլար Օվանէսով 50 կ. Օհանէս Գասպարով 1 ռ., Սէրոմ Փուցեխով 1 ռ., Մկրտիչ Փուցեխով 1 ռ., Գէորգի Պիպինով 1 ռ., Մակար Թարուբիտենանց 1 ռ., Եգոր Մեսինիկով ռուս 1 ռ., Ա. Ավանանիկով ռուս 1 ռ., Եղիսաբէթ Գուրգուլով 10 ռ., Տրիֆան Կարեմկիր ռուս 1 ռ., Ստեփան Լազարիին ռուս 2 ռ., Բեյեանին ռուս 1 ռ., Օգսիմ Եվմեդուլով 20 կ., Օհանէս Աթանէսեանց 1 ռ., Հայրապետ Պետրոսեանց 60 կ., Գէորգ Լազարեանց 50 կ., Անդրէի Զօրով ռուս 50 կ., Աղայ-Մերզայ Աղա Բաշիմ-օղլի պարսիկ 1., Աղաբէգ Աղաբէգով պարսիկ 1 ռ., Կէշերզայ ռուս 1 ռ., Սիմոնով 1 ռ., Խիմար Խիմարով առաջի կարգի վաճառական 50 կ., Օտար ումն 1 ռ., Մի ումն 1 ռ., Լեոն 50 կ., Օտար ումն 1 ռ., Մի ումն 1 ռ., Լեոն 50 կ., Սապարով 50 կ., Արտէմ Կոստանեանց 10 ռ., Գրիգոր Քալանթարեանց 1 ռ., Աղարալայ Թարուվ 5 ռ., Մարտիրոս Տէր-Աստուածատուրեանց 4 ռ., Յովսեփ Մազանով 1 ռ., Մելիք Ալէքսանդրով պարսիկ 1 ռ., Գրիգորի Մէջէրովսկի հրէայ 3 ռ., Պետրոս Թոխմաֆէյենանց 3 ռ., Կոստանդին Մէլիքեանց 3 ռ., Մի ումն 85 կ., Լազար Մարգարովի վրացի 1 ռ., Օհանէս Գրիգորով 20 կ. Մի ումն 10 ռ., Ալեքսանդր Թէշաու հէմց 1 ռ., Հաջի Աղայ Մամադ Ալի-Օղլի պարսիկ 3 ռ., Աբդուլ-Բահիմ Օմարով տաճիկ 1 ռ., Միր Աբաղ Միր Խամիլ-Օղլի պարսիկ 1 ռ., տիկին Թեյշաու Եէվեց 1 ռ., Մակար Յակոբով 1 ռ., Աղաջան Գրիգորով 50 կ., Սերգէյ Ակոյով 1 ռ., Օհանէս մահտեսի Լիանց 1 ռ., Դարչոյ Մարտիրոսեանց 1 ռ., Մէջոյ Աֆսեով 1 ռ., Միխեիլ Կօբիէվ վրացի Օհանէս Եսարլով 1 ռ., Միխակ Կոչ-չվիլի վրացի 1 ռ., Օհանէս Եարլով 1 ռ., Միխակ Կոզոչվիլի 1 ռ., Օհանէս Բալքինեանց 1 ռ., Գարան Սվէչ. Նիկով 2 ռ., Ալեքսանդր Աղդրէև ռուս 1 ռ., Եգոր Աֆսով վրացի 2 ռ., Միխիա Տէր Օհանով 3 ռ., Եգոր Օսմանցով 3 ռ., Յովսէփ Յովսէփեանց 10 ռ., Իվան Շուշարարզով 2 ռ., Կարապետ Ասլանով 1 ռ., Սարգիս Միրզախանեանց 25 ռ., Արզուման Աղաբեկեանց 2 ռ., Աւաք Հոզասապետեանց 1 ռ., Մէջի Անիսիմով հրէայ 1 ռ., Իլիա, Կուրդիվով ռուս 1 ռ., Օհանէս Մակարով 50 կ., Դավիթ վրացի 10 կ., Մասէ հրէայ 40 կ., Գիրաս Թարանով հրէայ 2 ռ., Մասէ Նիսիմով հրէայ 1 ռ., Սէրգէյ Զախարով 3 ռ., Գրիգոր Միրզեանց 1 ռ., Աւետիս Գասպարեանց 1 ռ., Գրիգոր Խրաչեանց 1 ռ., Նիկոլայ Վասիլեվ ռուս 50 կ., Նէրսէս Խաչեանց 1 ռ., Խաչան Ստեփանով 1 ռ., Մէսրոպ Դավոյանց 30 կ. Արզում Ասաթ Բարաեվ պարսիկ 75 կ., Գաբրէ Սիմոնով 1 ռ., Մէջէլ Միրզաբեկեանց 1 ռ. Կարգ Աղաբեկեանց 1 ռ., Միրզա Գասպարով 5 ռ., Մամմադ Աթավ հայի-Օղլի տաճիկ 20 կ., Զէրիվ Զաբրաբան Օղլի տաճիկ 20 կ., Սիմոն Ազարաեանց 2 ռ., Մակար Բաանդուրով 50 կ., Աթանէս Դավիդով 50 կ., Աւագէլ Խալատուրով 1 ռ., Գէվորգ Դաղով 20 կ., Եգոր Գալեանց 1 ռ., Շաման Տէր-Օհանով 2 ռ., Մկրտչէլ Տէր-Յովհաննեանց 3 ռ., Մի ումն 10 կ., Գուսարն է 230 ռ.

Աւետիս Ցուրփայեան

## ՆԱՄԱԿ ԹՄԲԱԳԻՐԻՑ

Թիֆլիս, յունիսի 7

«Մշակի» № 94 մէջ կարդացի Շուշուց գրած մի նամակ, մայիսի 12-ից, Արցախեցի սառրագրութեամբ, որի մէջ ի մէջ զանազան լուրերի հացի թանգութեան և սովի մասին, լիցված է իմ ազգանունս, որպէս այն անձերից մէնը, որոնք իբր թէ նպաստել են թանգութեան զարգանալուն։

Ահա ինչ է գրված «Մշակի» յիշեալ համարի մէջ. «Թէև անցեալ տարին մուկն ու մորեխը Շուշու գաւառին այնքան չէին վնասել, որքան ուրիշ տեղերին, բայց զարհալ սարսափելի եղաւ թանգութիւնը, որի պատճառների մեծ մասը արուեստական էին. օրինակի համար պ. Հախվերդեանը հազարաւոր չէվիրտներով ցորեն էր հաւաքել տուել ու մի չուշեցի վաճառականի ճարպիկ օգնութեամբ ծածուկ իրաւունք ստացել և ցորենը փախցրել էր Գանձակ»։

Նախ պէտք է նկատեմ, որ այնտեղ, որտեղ մուկն ու մորեխը սկսում են երևալ, այնտեղ ժողովուրդը երկիրպէս ենթարկվելով, գեները ցորենի վրա խլոյն բարձրանում են, ուրեմն այդ բարձր գեները արուեստական չեն կարող համարվել։ Իսկ պ. Արցախեցու զրպարտութիւնների դէմ ինձ արդարացնելու համար կասեմ, որ թէև ես իմ պատից չատ տոր եմ համարում պատասխանել անմեղս անձիդ և անեղծնի լուրերին, սակայն ճշմարտութիւնը տպագրական ճանապարհով վերականգնելու նպատակով, պարտք եմ համարում ինձ համար յայտնել հետևեալը։

Որպէս յայտնի է թէ հասարակութեանը և թէ տէրութեանը, ես ահա տաս տարի է, որ Գանձակից 17 վերստ հեռաւորութեամբ ալիւրի մի ջաղաց ունեմ, և իմ պարապմունքս եղել է միշտ պարզաստել կրուպչատկա ասված ալիւրը։ Պարզ է որ իմ գործարանս պահանջելու համար ինձ հարկաւոր է ցորենի մեծ պաչար խրոչանչիւր տարի։ Ցորենի քանակութիւնը, որ ես գործ էի ածում ալիւր պատրաստելու համար, հասնում էր միշտ տարեկան 100,000 պուդի։ Իմ պարապմունքս չարչիութիւն կամ հարստատարութիւն չէ, այլ ես գործարանատէր եմ և ինչքան էլ թանգութիւն լինի, ես իմ գործարանս կանգնեցնել չեմ կարող, այն գործարանը, որի վրա բանում են քսան հոգի առնչի ստացող բանվորներ և որի նրպատանին է մրցութիւն անել Անդրկովկասս գրսից բերվող ալիւրի հետ։

Եւ ահա այս թանգութեան ժամանակն էլ ես ստիպված էի առնել ցորեն, գործս չարուսանկելու համար. Շրջակայ տեղերից իմ գործարանին հարկաւոր ցորենի պակասը գնելու համար ես պատասխանատու իրաւունք ունեմ ստացած. Բայց չը նայելով իմ բոլոր ջանքերին, այս տարի ես ոչ թէ միայն չը կարողացայ ինձ հարկաւոր պակասը լրացվին գնել (ուր մնաց հազարաւոր չէվերտներով), բայց ընդամենը, ամբողջ տարվայ ընթացքում կարողացայ Շուշու գաւառում մինչև 8000 պուդ ցորեն գնել, որ ի հարկէ բաւական չէ իմ գործարանս մէջ գործը կատարելու համար։ Եւ այժմս էլ, ցորենի պակասութեան պատճառով իմ ջաղացս կանգնած է և էլ չէ բանում....

Ուրեմն ինչ են նշանակում Արցախեցու նման ազնիվներների զրպարտութիւնները, թէ ես փախցրի հազարաւոր չէվերտներով ցորեն և այն էլ մի ինչ որ չուշեցի ճարպիկ վաճառականի օգնութեամբ....

Մի կողմից ես պատիւ չունեմ ճանաչել ոչ մի ճարպիկ չուշեցի վաճառականին և միւս կողմից չափից դուրս ծիծաղելի և անիրավական եմ զրանում այդ տեսակ խօսքեր, ինչպէս օրինակ. «ծածուկ իրաւունք եմ ստացել» և այլն.... Եթէ ես իրաւունք եմ ստացել, ուրեմն դա ծածուկ չէր կարող լինել։

Վերջացնում եմ խօսքս ասելով, որ ամբողջ ցորենը որ ես գնում եմ, ես հրապարակապէս եմ գնում, յատուկ իմ գործարանս համար, նրանից ալիւր պատրաստելու դիտաւորութեամբ և բոլորովին հարկաւորութիւն չունեմ ցորենի մի հատիկ անգամ ծածուկ գնելու և փախցնելու։

Գաբրիել Ավետիսեան

## ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

«Մշակի» կէս տարվայ բաժանորդագրութիւնը արդէն բացված է։ Մեր լրագրին կէս տարով գրրվել ցանկացողները կարող են մեզ ուղարկել այժմ 6 բուբլ և կը ստանան «Մշակը» յուլիսի 1-ից։ Հանդարտարանների ուսանողներին և զորոցների աշակերտներին թէ Թիֆլիսում և թէ գաւառներում գիշումն է լինում, նրանք կարող են վեց ամսվայ համար 5 բուբլ մարել։ Բացի սրանից Թիֆլիսի զպրոցների աշակերտները կարող են մաս մաս վճարել։

—

Ներկայ ամառվայ պէս զարմանալի ամառ ամենաներս մարդիկ անգամ չէին յիշում Թիֆլիսում Գրեթէ ամեն օր անձրև է գալիս, չատ հով է լինում և մի քանի օր չարունակ մինչև անգամ ցուրտ եղաւ, ապրիլի յունիսի 6-ից սկսած։ Հայոց օրացոյցը այդ գուշակել է և գուշակում է թէ յուլիսին էլ ցուրտ կը լինի։

## «ՄՇԱԿԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 6 յունիսի։ Երկկ Նորին Բարձրութիւն Մեծ Իշխանը Հի Օլգա Ֆէոդորովնա, Դէսրգի և Ալէքսանդր Միխայլովիչ որդիների հետ ուղևորվեցաւ արտասահման։

ՄՈՍԿՎԱ, 6 յունիսի։ Երեկ բացվեցաւ Պուշկինի հանդէսը, որտեղ չը կար վենամարտութեան ժամանակ գնուսված Ծակված Պուշկինի սիրատուր, որը գտնվցվել է Պօգոդինի թատրան ժամանակ։ Ֆրանսիական կառավարութիւնը մի պատգամաւոր ուղարկեց հանդիսին ներկայ գտնվելու համար։ Ռուսաց գրականութեան ընկերութեան նախագահին տուած է պատուաւոր լեգեոնի շքանշան։ Պուշկինի արձանը կանգնեցնելու համար նշանակված մասնաժողովի երկկոյս հանդիսաւոր նիստին ներկայ էին Պուշկինի տղկեկերը, որոնքը և բանաստեղծի ծերունի ծառան։

ՄՈՍԿՎԱ, 6 յունիսի։ Այսօր Օրդինարդի խշանի, լարարատների անձանց, բոլոր պատգամաւորների և ժողովրդի բազմութեան ներկայութեամբ հանդիսաւոր բացվեցաւ Պուշկինի արձանը։

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 6 յունիսի։ Պետական բանկի 5% տոմսակը առաջին շրջանի արժէ 93 ր. 12½ կ., երկրորդ 92 ր. 37½ կ., երրորդ 93 ր. 50 կ., չորրորդ 93 ր. 12½ կ., Ներքին առաջին 5% փոխառութեան տոմսակը արժէ 231 ր., երկրորդ 224 ր. արևելեան առաջին փոխառութեան տոմսակը արժէ 91 ր. 50 կ., երրորդ 91 ր. 75 կ., երրորդ 91 ր. 50 կ., ոսկի 7 ր. 73 կ., Ռուսաց 1 բուբլ Լոնդոնի վրա արժէ 25 19/32 պէնս, ռուսաց 100 բուբլ Բերլինի վրա 129 մարկ 50 պֆ., Համբուրգի վրա արժէ 219 մարկ, 25 պֆ., Փարիզի վրա 269 ֆր.։ Բարոյի սրամարութիւնը ամբոխ է։

Խմբագիր—Տպարարակոր ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

## Ե. Պաշտօնական մարմին

19. Ընկերութիւնը ունի իր կենտրոնական ժողովը, կենտրոնական ժողովոյ դիւանը, ներկայացուցիչ, միւդերու մասնախումբը և մասնաժողովը։

Զ. Կենտրոնական ժողով

20 Կենտրոնական ժողովը որ ընկերութեան տնօրէն մարմինն է, կը բաղկանայ փարիզ գտանուող ընկերներէ և գաւառաց ներկայացուցիչներէ կամ միւդերու մասնախմբաց անդամներէ։ Կենտրոնական ժողովը ընկերութիւնը կը ներկայացնէ, նիստերուն մէջ ընկերութեան վերաբերեալ գործերը կը որոշէ և կը կատարէ դիւանի, ներկայացուցչաց և մասնախմբաց ընտրութիւնը։

21 Կենտրոնական ժողովը իր որոշումներն և ընտրութիւնները գաղտնի քուէարկութեամբ կը կատարէ։ Ընտրութիւնք վաւերական չեն համարուիր, եթէ առաջին քուէարկութեան մէջ բացարձակ առաւելութիւն չը գոյանար, այն ատեն երկրորդ քուէարկութեամբ համեմատական առաւելութիւնը բաւական կը համարուի։ իսկ ընտրութեանց մէջ կրկին քուէարկութեամբ եթէ հաւասար քուէ գոյանայ, երիցագոյնը ընտրեալն կը համարուի։

22) Կենտրոնական ժողովը ամեն անգամ առաջի կիրակին պարտաւորուալ նիստ կը կազմէ և ատեանը կը բացուի ճիշդ ժամի մէկին։

23) Կենտրոնական ժողովոյ նիստերը օրինաւոր համարելու համար գէթ տաս և վեց անդամոց ներկայութիւն անհրաժեշտ է։

24) Ատենագրաւոր պատճառի և կանխաւ գրաւոր ազդարարութեան ժողովոյ նիստերէն բացակայ գտնուողք ամեն մէկ անդամուան համար մէկ ֆրանկ տուգանք կը վճարեն։

25) Կենտրոնական ժողովը արտաքոյ կարգի նիստ կը կազմէ դիւանի որոշմամբ։

26) Կենտրոնական ժողովը իրաւունք չունի ընկերութեան նպաստակէն դուրս որ և է խնդրոյ մը ընկերութեան ստացուածքէն ոչինչ յատկացնելու։

27) Կենտրոնական ժողովոյ մէջ երբէք կրօնական և քաղաքական խնդրոց վրա վիճաբանութիւն տեղի չը պիտի ունենայ, այս սկզբան դէմ վարմունք մը տեղի ունեցած ժամանակ, ատենախօսին անդամ մը ազդարարել վերջը, նիստը վերցրած կը համարուի, եթէ վիճաբանութիւնը չարունակվի։

28) Սովորական պարագաներու մէջ կենտրոնական ժողովը իրաւունք ունի իւր պատասխանատուութեան որոշումներ տալու անմիջապէս ներկայացուցչաց կամ միւդերու մասնախմբաց ծանուցանելով, նոցա հաւանութիւնն ստանալու պայմանաւ։

29) Եթէ կենտրոնական ժողովոյ անդամներէն մին առանց ատենախօսէն խօսք ուզելու խօսի, զընկերն ընդմիջէ կամ անարգէ. մի խօսքով ժողովոյ օրինաւորութիւնը խանգարելու վարմանց մէջ գտնվի, այդ նիստին մէջ առաջին անգամ ի կարգ կը կանչուի, երկրորդ անգամուն խօսելու, քուէարկելու իրաւունքը կը կորսնցնէ, իսկ երրորդ անգամուն ժողովատեղէն հեռանալ կը պարտաւորի, և եթէ մի քանի նիստերուն մէջ սոյն վարժունքը չարունակէ, ժողովոյ որոշմամբ ընկերակցութենէ կը զղարի։

30) Կենտրոնական ժողովոյ որ և է ազգաւ բացակայ գտնուողք կարող են իրենց քուէներն և յարկարդի գիտողութիւններն դիւանի ատենապետին յղել նամակաւ։

31) Եթէ կենտրոնական ժողովոյ անդամներէն մին ժողովոյ նիստերէն բացակայ գտնուի, նոյն նիստերուն մէջ տրուած որոշմանց վրա բերանացի գիտողութիւն մ'ընելու իրաւունք չունի, բայց գրաւ է իւր դիտողութիւնները ներկայացնել գրաւորապես, որպէս առաջարկութիւն։

32) Եթէ որ և է խնդրոյ մը վրա կենտրոնական ժողովոյ մէջ համաձայնութիւն չը գոյանայ և կամ թէ ժողովը եղած առաջարկութիւն մը աւելի լուրջ եղանալաւ իմաստասիրելու և լուսաբանել ուզէ, մասնաժողով մ'ընտրելով խնդիրը նմա յանձնէ, որպէս զի իր քննութեան արդիւնքը դիւանի տեղեկագրէ։

33) Կենտրոնական ժողովը տարոյն վերջը իր ելմտացոյցը մասնրամասնաբար լրացրոց մէջ հրատարակելէն զատ, ներկայացուցչաց կամ գիւղերու մասնախմբաց ալ կը ծանուցանէ, ազդարարելով որ, եթէ ընկերք դիտողութիւն մ'ունին, մինչև երկու ամիս յայտնեն. այս պայմանաժամը լրանալէն վերջը դիտողութիւնք ընդունելի չեն։

34) Կենտրոնական ժողովը ամեն տարոյ սեպտ. 11-ին արտաքոյ կարգի նիստ մը կը կազմէ, համարատու մասնաժողովոյ տեղեկագիրը լսելու և նոր դիւանին ընտրութիւնը կատարելու համար, երեկոյ ընկերութեան տարեշրջանի խնջոյքը տեղի կունենայ ընկերաց իսկական ծախիքը։

Է. Դիւան

34 Կենտրոնական ժողովոյ դիւանը, որ ընկերութեան գործադիր մարմինն է, կը բաղկանայ հինգ անդամներէ, որք են ատենապետ, փոխ-ատենապետ, ատենագրիր, երկու փոխ ատենագրիրք, գանձապետ, համարակալ և երկու գործակատարք խորհրդակցք։ Սոքա պարտ են հրապարակաւ երդում տալ իրենց պաշտօնը անկեղծութեամբ և անշահախնդրութեամբ և հաւատարմութեամբ կատարելու համար։

36) Դիւանի պաշտօնը կը տևէ ամբողջ մի տարի, իսկ եթէ անդամոց մին հրաժարի կամ հեռանայ, յոր. 21-րդի տրամադրութեան համեմատ իր յաջորդը կընտրուի, որոյ պաշտօնը կը վերջանայ իր ընկերաց պաշտօնավարութեան հետ։

37) Դիւանը ամեն տաս և հինգ օր պարտաւորեալ նիստ կը կանչէ, և ատենագրական պարագաներու մէջ ատենապետին և ատենագրին որոշմամբը արտաքոյ կարգի ժողով ալ գումարելու իրաւունք ունի։

38) Ատենապետը կամ փոխ-ատենապետը թէ կենտրոնական ժողովոյ մէջ և թէ դիւանի մէջ մի և նոյն պաշտօնը կը վարեն։ Սոցա պարտք է կանոնագրին և կենտրոնական ժողովոյ ու դիւանի որոշմանցն անձերի գործադրութեան հսկել, վիճաբանութեանց և քուէարկութեանց օրինաւորութիւնն ապահովել։ Սոքա պարտին մասնանց յաջորդել, եթէ մին վիճաբանութեան կուզէ մասնակցել։ Իսնոց բացակայութեանը անդամոց երիցագոյնը ժողովը նախագահելով սոյն պաշտօնը կը վարէ։

39) Ատենապետը թղթակցութիւնները կը կատարէ, օրագիրքը կը կարգադրէ, կենտրոնական ժողովոյ և դիւանի ատենագրութեանց օրինաւորութիւնը կը հսկէ և ընկերութեան պատկանեալ գրութիւնները կը պահպանէ։

40) Փոխ-ատենապետը կենտրոնական ժողովոյ նստերուն մէջ արձանագրութիւններն կը գրեն, իսկ մասնաւորապէս մին կենտրոնական ժողովոյ և միւսը դիւանի ատենագրութիւնները կը նրբագրեն։

(Կը չարունակվի)